Պատմություն և մշակույթ 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.080

Reflections on the Situation in Western Armenia in the Pages of "Horizon" on the Eve and at the Beginning of World War I

Armen Karapetyan
https://orcid.org/0009-0003-6026-2790
Senior Research Fellow, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia, PhD
armenaraqsyan@mail.ru

Keywords: Western Armenia, "Horizon" daily newspaper, Armenian question, reform program, anti-Armenian sentiments, violence, correspondents, practices.

On the eve of the First World War, a rather difficult, complex and tense situation had developed in Western Armenia. Although the agreement on reforms had already been signed, the Young Turk authorities not only had no intention of implementing it, but also incited the incitement of anti-Armenian sentiments among the Kurds, Circassians and other Muslim communities. "Horizon", one of the influential Eastern Armenian periodicals published in Tbilisi, kept everything related to the reforms and the Armenian Question in the spotlight. Its pages constantly contained fresh information and analyses on the situation in Western Armenia. The daily strongly condemned the Armenian-displacing and depopulation-oriented practices of the Turkish authorities. Although European inspectors were already in Armenia, they were forced to leave as soon as the First World War began. The reforms again remained on paper: unfeasible.

Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի արտացոլումը «Հորիզոնի» էջերում (Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի սկզբում)

Արմեն Կարապետյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.

Հիմնաբառեր՝ Արևմտյան Հայաստան, «Հորիզոն» օրաթերթ, Հայկական հարց, բարենորոգումների ծրագիր, հակահայկական տրամադրություններ, բռնություններ, թղթակիցներ, գործելակերպ:

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 80-88

Received: 15.06.2025
Revised: 12.08.2025
Accepted: 14.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Առաջին համաշխարհային պատերազմի անմիջապես նախօրյակին Արևմտյան Հայաստանում ստեղծվել էր բավական ծանր, բարդ ու լարված իրավիճակ: Թեև բարենորոգումների համաձայնագիրն արդեն ստորագրվել էր, բայց երիտթուրքական իշխանությունները ոչ միայն մտադրություն չունեին այն իրագործելու, այլև հրահրում էին հակահայկական տրամադրությունների բորբոքումը քրդերի, չերքեզների ո մահմեդական այլ հանրության կողմից: Թիֆլիսում հրատարակվող արևելահայկական ազդեցիկ պարբերականներից «Հորիզոնը» ուշադրության կենտրոնում էր պահում բարենորոգումների ու Հայկական հարցի հետ կապված ամեն ինչ: Նրա էջերում մշտապես թարմ տեղեկություններ ու վերլուծականներ կային Արևմտյան Հայաստանում տիրող կացության վերաբերյալ: Օրաթերթը խստորեն դատապարտում էր թուրքական իշխանությունների հայահալած ու հայաթափմանը ուղղված գործելակերպը: Թեև արդեն Հայաստանում էին գտնվում եվրոպական վերատեսուչները, սակայն Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես նրանք ստիպված էին հեռանալ: Բարենորոգումները կրկին մնացին թղթի վրա՝ անիրագործելի:

Отражение ситуации в Западной Армении на страницах газеты «Горизонт» накануне и в начале Первой мировой войны

Армен Карапетян
Старший научный сотрудник Института истории НАН РА, кандидат исторических наук

Ключевые слова: Западная Армения, ежедневная газета «Горизонт», армянский вопрос, программа реформ, антиармянские настроения, насилие, репортеры, практика.

Накануне Первой мировой войны в Западной Армении создалась довольно сложная и напряженная ситуация. Хотя соглашение о реформе уже было подписано, власти младотурок не только не собирались его реализовывать, но и разжигали антиармянские настроения в стране. Тифлисский «Горизонт», одно из влиятельных восточноармянских периодических изданий, освещал все, что связано с реформами и армянским вопросом. На его страницах всегда была свежая информация и анализ ситуации в Западной Армении. Хотя европейские инспекторы уже были в Армении, они были вынуждены снова уехать на бумаге, что нецелесообразно.

* * *

Ներածություն: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝1914 թ. գարնանը և մինչև ամառվա կես, իրավիճակը Արևմտյան Հայաստանում մնում էր ծայրաստիճան լարված, շիկացած, բռնկումի ու պայթյունի պատրաստ: Բարենորոգումների համաձայնագիրը վերջապես ստորագրվել էր 1914 թ. հունվարի 26-ին, սակայն թուրքական իշխանությունները, թևավորված իրենց հովանավոր Գերմանիայի աջակցությունից, բնավ մտադիր չէին կատարել այն: Ավելին, թուրքերին ոգեշնչում էին սառնասրտորեն իրականացնել իրենց պանթուրանական ծրագրերը [Лудшувейт, 1966, 33]:

Reflections on the Situation in Western Armenia in the Pages of "Horizon" on the Eve and at the Beginning of World War I

Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի արտացոլումը «Հորիզոնի» էջերում (Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի սկզբում)

Թուրքական կառավարող կլիկը, հանձինս առաջին հերթին Էնվերի ու Թալեաթի, վստահաբար և զոռոզամտությամբ էին նետվում պատերազմի հորձանուտը՝ համոզված, որ այն լավագույն առիթն է վաղուց փայփայված ազգայնամոլական իղձերը կյանքի կոչելու համար [Nassibian, 1984, 32]: Մինչդեռ հայությունը հավատով ու սպասումով լի էր դեպի բարենորոգումները: Հայ հասարակական-քաղաքական շրջանների իրագործվելիք բարենորոգումների հանդեպ ունեցած ակնկալիքները լավագույնս ձևակերպված է կուսակցական ու քաղաքական աչքի ընկնող գործիչ Ս. Վրացյանի դիպուկ ու տարողունակ արտահայտությամբ. «Հայ ժողովրդի առջեւ բացում էին նոր, անսահման, հրապուրիչ հորիզոններ…» [Վրացեան, 1958, 7]: Սակայն վերոնշյալ անսահման «հրապուրիչ հորիզոնները» այդպես էլ չբացվեցին արևմտահայության առջև, քանի որ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որն արմատապես փոխեց կամ բեկեց հայ ժողովրդի պատմական ճակատագիրը:

Չպայթեր Առաջին աշխարհամարտը՝ նախատեսված ու համաձայնագրի բերված բարենորոգումների փաթեթով, մանավանդ եվրոպական ու համաշխարհային հասարակական կարծիքի ներգործուն ազդեցությամբ, գուցե որոշ բարենպաստ պայմաններ ստեղծվեին արևմտահայության կյանքի, պատվի ու ինչքի ապահովության համար: Այդ առումով անչափ բնորոշ դիտարկում է արել վաստակաշատ պատմաբան Հ. Սիմոնյանը՝ ընդգծելով, որ «ավելի քան երեք տասնամյակ շարունակ մեծ տերությունների կողմից բազմիցս խոստացված, բայց երբեք չգործադրված հայկական բարենորոգումները, վերջապես կարծես թե իրական կերպարանք էին ստանում» [Սիմոնյան, 1996, 369]:

Այս ամենը, այո՛, արձանագրում ենք արդեն մեկդարյա ու դրանից ավել հեռավորությունից, իսկ այն հեռավոր՝ 1914 թ. բարդ ու դրամատիկ թոհուբոհի մեջ դեռ հայկական պարբերականների օրակարգում բարենորոգումների հիմնահարցը կենսունակ էր թվում ու խիստ հրատապային: Այդ պարբերականների շարքում կարևորագույն դերակատարություն էր վերապահված Թիֆլիսում հրապարակվող «Հորիզոնին», որը էական ազդեցություն ուներ արևելահայ իրականության մեջ հանրային կարծիքի ու մտածողության մշակման, ուղղորդման և իմաստավորման գործընթացում: Իսկ «Հորիզոնի» ամենօրյա առաջնահերթ ուշադրության առանցքում Հայկական հարցի հետ կապված ու նրան աղերսվող իրողություններն էին, Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակը:

«Հորիզոն» պարբերականը շարունակում էր ուշիուշով հետևել Հայկական հարցի շուրջ ընթացող զարգացումներին ու Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակին: 1914 թ. հունիսի 13-ին «Հայկական հարցը» խորագրի ներքո թերթը նշում է, որ հայկական բարենորոգումների շահառուն ինքը՝ թուրքական պետությունն է, որը Ալբանիայի ու Մակեդոնիայի կորուստներից հետո պետք է անհրաժեշտ մի վերջին դասն ու խրատը ստացած լինի ու իրատեսական վերաբերմունք դրսևորի հայկական խնդրի հանդեպ. «Արդ՝ պիտի հրաժարի վերազարթնող Թուրքիան քիւրտերը թրքացնելու և հայերը ջնջելու իր յաւակնութիւններէն: Պիտի տենչա ճշմարտապէս յառաջադէմ պետութիւն մը հիմնել, յարգելով բոլոր իր ցեղերուն բոլոր

իրաւունքները։ Հոս է լուծումը» [«Հորիզոն», 13.06.1914, 1]։ Անշուշտ, թերթի դիտարկումը ճշմարտացի էր, ռեալիստական և համապատասխանում էր պատմական զարգացման տրամաբանությանը։ Սակայն թուրքական իշխանությունները հակված չէին ողջամիտ գործողությունների դիմելու։ Մինչդեռ հայությունը հույսով և հավատով սպասում էր բարենորոգումների գործադրությանը։ Թերթը կրկին հուսավառ հայացքով նայում էր մարզպանների [վերատեսուչների] գործունեության ուղղությամբ՝ գտնելով, որ թուրքական կառավարությունն էլ «իր իսկ շահուն համար՝ պէտք է աջակցի Մազպաններուն» [«Հորիզոն», 13.06.1914, 1]։

Ավելին, կանխատեսվում էր, որ եվրոպական կառավարիչները, որոնք լիազորված են եվրոպական տերությունների կողմից, քանի դեռ գործում են Հայաստանի մեջ, կարող են դառնալ հայ-թուրք ու քուրդ համերաշխության կերտիչները։ Իսկ սա վերջին պատեհություն «մըն է, ուրեմն որ կը ստանայ նոր Թուրքիան, վերջին վարկ մըն է, որ կբացի իրեն՝ պետութինը փրկելու համար վերջնական քայքայումէն մը» [«Հորիզոն», 13.06.1914, 1]։

Շարունակելով սույն թեման՝ թերթը հստակորեն շեշտադրում էր, որ միամտություն կլինի կարծել, թե բարենորոգումների այս նոր ծրագիրն ու վերատեսուչների կարգումը պայմանավորված էին Եվրոպայի կամ երիտասարդ թուրքերի հայասիրությամբ։ Իհարկե, ո՛չ, մանկամիտներին անգամ հայտնի էր դա։

Իրականությունն այն է, որ հայ ժողովուրդն է կարողացել դառնալ սույն քաղաքական նոր կայսրության կերտիչ ուժերից մեկը. «Եթէ հայկական խնդիրը գործնական ուղի մը կը մտնէ այսօր-կարգ մը պատճառներէ զատ… առաջինը անոնց մէջ հայ ցեղին զօրացումն է՝ ֆիզիկապէս, բարոյապէս և տնտեսապէս՝ վերջին 20 տարուան ընթացքին» [«Հորիզոն», 14.06.1914, 1]։

Այս դիտարկումը նոր, թարմ մոտեցում էր հայ ազգային-ազատագրական շարժումը գնահատելու ու իմաստավորելու ճանապարհին, որը, ինչ խոսք, մոտ էր օբյեկտիվ պատմական ճշմարտությանը։ Այո՛, իրականությանը մոտ է այն պնդումը, թե հայ ժողովուրդը «չկարողանար իր խօսքը ըսել այն դէպքերուն մէջ. որոնք 1900-էն մինչև 1913 քաղաքական նոր խմորումներ առաջ բերին Կովկաս, Պարսկաստան և Թիւրքիա– եթէ չստեղծէր իր կամքը պարտադրելու ուժը՝ այսօր երգած էր անոր երգը» [նույն տեղում]։

Հաջորդ համարներում ևս ծավալուն անդրադարձեր կան Թուրքիայում տիրող ծայրահեղ անարդար կացության, վերատեսուչների ունեցած իրավասությունների ու գործադրելիք ջանքերի վերաբերյալ։ «Պաշտօնէութեան մաքրազտումը» ենթավերնագրով հոդվածում նշվում է, որ արդար և պատշաճ օրենքների զգոյությունը չէ, որ անկման է հասցրել թուրքական պետությանը, այլ այն, որ այդ օրենքները գործադրողներ պարզապես չկան։ «Մարդն է, որ չունինք – կամ գրեթէ չունինք՝ որ օրէնքը գործադրէր, աչքը գոց ու խիղճը բաց առանց խտիր դնելու ցեղին, կրօնքին ու դիրքին» [«Հորիզոն», 15.06.1914, թիվ 128, 1]։

Աղետալի սույն կացությունը կարող էր ինչ-որ չափով դարմանվել, եթե թուրքական կառավարությունը բացորոշ քաղաքականություն չունենար «նպաստաւորելու տիրապետող ցեղը և նկուն պահելու միւս ցեղերը» [նույն տեղում]։

Նշվում է, որ երկու ուղիներ կան այս աղետաբեր ընթացքին հակազդելու համար՝ նախ կարգավորիչ հակազդող մարմին ունենալ այդ պաշտոնեության գլխին, երկրորդ՝ իշխանությանը

մասնակից դարձնել կայսրության բոլոր ժողովուրդներին, «փոխադարձ քոնթրոլ ստեղծելով մէկէն միւսին վրայ» [նույն տեղում]:

«Հայկական հարցը» խորագրի ներքո «Հայաստանի բարեկարգումը եւ մարզպանները» ենթավերնագրով դիտարկումներն ու վերլուծականը շարունակվեցին «Հորիզոնի» դեռ մի շարք համարներում: Ընդհանուրից դեպի մասնավորը ձգվող դիտարկումներում շեշտադրվում էր, որ Թուրքիայում աշխարհագրական, ցեղագրական ու մշակութային տարբերությունները, որոնք այնքան «այլազան են մէկ նահանգէն միւսը,– այնպիսի պէտքեր կը ծնին, որ անկարելի է ընդհանուր և միօրինակ լուծումի մը ենթարկել» [«Հորիզոն», 24.06.1914, թիվ 135, 1]:

Բարեկարգումների վերաբերյալ համաձայնագրում, անշուշտ, դրական երևույթ էր որակվում այն, որ թուրքական վարչակարգը երկար համառելուց հետո, այնուամենայնիվ, ընդունեց և ճանաչեց նահանգային իրավասություններն ընդլայնելու անխուսափելի անհրաժեշտությունը, որը կարող էր նոր հորիզոններ բացել ժողովրդական նախաձեռնությունների համար: Սակայն այդ կարևոր քայլը մթագնեց նրանով, որ նահանգային ներկայացուցչական ժողովների կազմը որոշելու էր ոչ թե համամասնորեն, այլ նոր մարդահամարի տվյալների հիման վրա: Իսկ Օսմանյան կայսրության մեջ ցանկացած մարդահամար՝ անգամ վերատեսուչների հսկողության ներքո անցկացվող, չէր կարող չընթանալ թուրքական իշխանությունների գծած սխեմայով ու սցենարով, ինչը բնականորեն հայկական շրջանակների անհանգստությունն էր առաջ բերում:

Ռուս-թուրքական բախման անխուսափելիությունը: «Հորիզոնը», որը ամենայն ուշադրությամբ հետևում էր և՛ պատերազմի դաշտում, և՛ միջազգային հարաբերություններում ընթացող անցուդարձին, հետզհետև հակվում էր այն կարծիքին, որ ռուս-թուրքական ռազմական առճակատումն այլևս անխուսափելի կլինի մոտակա ամիսների ընթացքում:

1914 թ. հոկտեմբերի 16-ին թերթը հայտնում էր, որ թուրքերը շուրջ 250 հազարի չափ զորք են կուտակել ռուսական սահմանների վրա. «Ամէն կողմէ ժողոված են և համիտէ ալայները և նոյնպէս զրկած դէպի Պայազիտ, Ալաշկերտ, Հասան Գալէ-Էրզրում: Այժմ... սկսած են Հալեպէն ու Մոսուլէն ալ զօրքեր տանել դէպի նոյն սահմանները» [«Հորիզոն», 16.10.1914, թիվ 229, 1]:

«Գերմանիայի խաղը Թիւրքիայում» առաջնորդող հոդվածում տրամաբանական անհերքելի փաստերով ապացուցվում էր, որ Թուրքիայի համար այժմ շատ դժվար կլինի հրաժարվել պատերազմից [իհարկե, Գերմանիայի կողմում], քանի որ երիտթուրքական իշխանությունները ժամանակի ընթացքում կարողացան ոչ միայն մեծ քանակությամբ գերմանական արտադրության զենք և զինամթերք տեղափոխել իրենց երկիր, այլև թուրքական բանակը մեծապես համալրեցին գերմանական սպաներով, որոնց «ձեռքին է այսօր փաստօրէն Թիւրքիայի թէ ծովային և թէ ցամաքային զօրքերի ղեկավարութիւնը» [«Հորիզոն», 17.10.1914, թիվ 230, 1]:

Անչափ հետաքրքիր ու բնորոշ է հետևյալ դիտարկումը, թե Թուրքիան անգամ չցանկանա սկսել պատերազմ, նրա «սկսողները՝ թիւրք դրօշակի տակ, լինելու են գերմանացիները: Եւ նրա նշանները մենք արդէն տեսնում ենք: Վերջին այն լուրը, թէ «Գեբէն» զրահակիրը երկու օր է, ինչ

Բոսֆորից բացակայում է և լուրջ մտահոգութիւն թիւրք կառավարչական շրջաններում,– կարող է... լուրջ ենթադրութեան առիթ տալ, թէ չլինի՞ գերմանացիները, տեսնելով, որ թիւրքերը ձգձգում են և չեն ցանկանում պատերազմ սկսել, իրենք են ուզում վճռել խնդիրը՝ ռմբակոծելով Սև ծովի ռուսական ափերը» [նույն տեղում]:

Սա իրատեսական կամ մարգարեական կանխատեսում էր: Ճիշտ այդպես սկսվեց ռուս-թուրքական պատերազմական կոնֆլիկտը: Հաջորդ համարներում թերթն արդեն տալիս էր ռուս-թուրքական պատերազմական բախումն իր ընթացքի մեջ, երբ ռուսական նավահանգիստները ռազմական կանոններով ռմբակոծվում էին թշնամու ռազմանավերի կողմից:

Հաջորդ համարում նորից ընդգծվում էր այն միտքը, որ Կ. Պոլսում հաղթող դուրս եկավ գերմանասեր կուսակցությունը, կամ առավել ճշգրիտ «մինչեւ որ Պոլսի պալատում կը վճռուէր, թէ որ կուսակցութիւնն է տանելու յաղթանակը, որից և կախուած կը լինէր Թիւրքիայի վերջնական դիրքը, գերմանասէրները նենգութեամբ կարողացան Թիւրքիան կանգնեցնել ամենածանր վտանգի առաջ» [«Հորիզոն», 18.10.1914, թիվ 231, 1]:

1914 թ. հոկտեմբերի 21-ին առաջին էջին «Վերջին տագնապը» վերնագրված նյութը պատկանում է Հ. Թումանյանի գրչին: Բանաստեղծը, ի թիվս այլ հարցադրումների, կանգ էր առնում Հայկական հարցի դրական լուծման հրամայականի առջև. «Մեր ապագան արդէն կապուած է Ռուսաստանի հետ, և բարեբախտութիւն է, որ մեր ապագան կապուած է մի ժողովրդի հետ, որը մեծ և պայծառ ապագայ ունի: Թուրքահայերի ազգային ինքնուրոյն գոյութիւնը իրականութիւն պէտք է դառնայ ու զարգանայ Ռուսաստանի ձեռքով» [«Հորիզոն», 21.10.1914, թիվ 233, 1]:

Թերթը խստորեն քննադատում էր երիտթուրքական իշխանություններին՝ երկիրը դեպի պատերազմական արհավիրքները գլորելու համար. «Երիտասարդ թիւրքերը ոչ միայն չկարողացան երկրի հետ շաղկապել այլաւարտ ցեղերին և ձեռք բերել և ձեռք քաշել Աբդիւլ Համիդեան հալածանքներից, այլև կլանուեցին աւանտիւրիստական ձգտումներով և նպաստեցին Թիւրքիայի վերջնական քայքայման» [«Հորիզոն», 23.10.1914, թիվ 235, 1]:

Պատերազմը բոցավառվեց, իսկ հայությունը գտնվում էր անպաշտպան կացության մեջ: Թերթը հիշեցնում էր, որ տարիներ շարունակ թուրքական իրականությանը ծանոթ անձինք գաղտնի ու հրապարակավ հորդորներ էին կարդում՝ ուղղված ռուսահայությանը այն թելադրականով, թե հարկավոր է արևմտահայության ինքնապաշտպանության գործը ապահովել, թե «հարկաւոր է զինել այդ ժողովուրդը՝ մեր ունևոր եւ հարուստ դասը մի հատիկ պատասխան ունէր,– առանց ռուս կառավարութեան թոյլտուութեան մենք ոչինչ անել չենք կարող...» [«Հորիզոն», 25.10.1914, թիվ 237, 1]:

Պատերազմի բռնկումից հետո պարբերականը առաջին էջում «տաճկական պատերազմ» ու «Պատերազմի դաշտից. Ռուս-տաճկական սահմանը» խորագրերի ներքո ակնարկներ, վերլուծական ու անհրաժեշտ տեղեկատվություն էր հաղորդում իր սկզբնաղբյուրներից ու թղթակիցներից: Հատկապես շատ էին հաղորդագրությունները Կովկասյան բանակի շտաբից, պատերազմական մերձակա շրջաններից: Ամեն օր յուրաքանչյուր համարում թարմ տեղեկատվություն էր հաղորդվում ընթերցողներին ռուս-թուրքական ռազմադաշտերում ընթացող գործողություններից:

Թերթը ոգևորիչ օրինակներ էր բերում ռուսական մամուլից, որը, ի պաշտպանություն թուրքական լծի տակ տառապող հայության, կտրուկ ու վճռական քայլերի կողմնակից էր:

Reflections on the Situation in Western Armenia in the Pages of "Horizon" on the Eve and at the Beginning of World War I

Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի արտացոլումը «Հորիզոնի» էջերում (Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի սկզբում)

«Հորիզոնի» խմբագրությունը նույնպես համոզված էր, որ ռուս-թուրքական պատերազմը վերջապես պիտի լուծի «թիւրքահայ բազմաչարչար ժողովրդի տարաբախտ հարցը» [«Հորիզոն», 29.10.1914, թիվ 240, 1]: Թերթի դիրքորոշումն այդ առումով պարզ էր ու հստակ. պատերազմը պետք է փութացնի արևմտահայերի ազատագրությունը թուրքական բիրտ լծից: Իսկ ռազմաճակատից առայժմ ոգևորիչ լուրեր էին ստացվում, որոնք թերթը հրամցնում էր հատուկ ոգեշնչվածությամբ: Այսպես, թերթը ոգեշնչված նշում էր, որ «հոկտեմբերի 27-ին թուրքերը յարձակման ենթարկվեցին և ջարդուեցին Խանասարի լեռնացքի մօտ, Ատրպատականից դէպի Վան տանող ճանապարհի վրայ. ձգելով իրենց սպանուածներն ու վիրաւորները, թուրքերը շտապով նահանջ տուին կատարեալ անկարգութեամբ» [«Հորիզոն», 1.10.1914, թիվ 243, 1]:

Թերթի էջերում բազմիցս նշվել է, որ ռուս զինվորները հիացմունքով են խոսում հայ զինվորների քաջության ու տոկունության մասին: Թերթը մեծ ուշադրությամբ հետևում և լուսաբանում էր հայկական կամավորական ջոկատների գործողությունները և թիկունքում ի նպաստ հայ կամավորական խմբերի կատարվող եռուն աշխատանքները: Այսպես, 1914 թ. նոյեմբերի 5-ին, ի լուր հայ հանրության, արձանագրվում էր այն իրողությունը, որ Համազասպի ջոկատը բժիշկ ու դեղորայք չունի: Սուրամից հաղորդվում էր, որ հայ կամավորների օգտին այստեղ «հաւաքած է առայժմ 250 ռուբլի: Սուամից մի խումբ կամաւորներ մտադիր են մեկնել հայկական խմբերին միանալու համար» [«Հորիզոն», 5.10.1914, թիվ 246, 1]:

Պատերազմը ոգևորել էր հայ երիտասարդությանը Կովկասում ու ամենուր: Նույնիսկ այլազգի երիտասարդներ «հրապուրուած հայ ժողովրդի իղձերի վեհութեամբ և հայ երիտասարդութեան անձնուիրութեամբ՝ ցանկութիւն են յայտնում մտնել հայ կամաւորների գնդերի մէջ» [«Հորիզոն», 6.10.1914, թիվ 247, 1]:

Թերթը կարևոր էր գտնում նախազգուշացնել, որ հայ ժողովրդի ծաղկուն ուժերը չպետք է երբեք ապարդյուն վատնվեն: Միաժամանակ ռազմադաշտից ստացվող լուրերը ահազանգում էին, որ Աբաղայի դաշտում ծանր վիրավորում էր ստացել 2-րդ կամավորական ջոկատի հրամանատարը՝ հանրահայտ ազգային ռազմական գործիչ Դրոն [Դրաստամատ Կանայան]: Այդ առիթով թերթը հրատարակել էր նրա մեծադիր լուսանկարը [«Հորիզոն», 15.10.1914, թիվ 255, 1]:

1914 թ. դեկտեմբերյան համարներում մանրամասներ էին հրապարակվում ռուս-թուրքական պատերազմի Սարիղամիշի ճակատում ընթացող իրադարձություններից: Միաժամանակ քննվում և վերլուծվում էին ռազմաճակատի այլ հատվածներում տիրող իրավիճակը, ուժերի հարաբերակցությունն ու դասավորվածությունը, կողմերի հաջողության հասնելու շանսերը, դեմ ու կողմ փաստարկները և այլն:

Թերթը լավատեսությամբ էր տոգորված, թեև արդեն հեռագրերը գուժում էին, որ պատերազմական և նրան մերձակա շրջաններում թուրքերն ու քրդերը իրենց այնքան բնորոշ ձեռագրով իրագործում էին հայ ազգաբնակչության թալանն ու կոտորածը. «ահագին հայ

գաղթականութիւն է եկել Ալաշկերտից, Բայազիտ-Պիադինի շրջանից, նաև Աղբակից ու Պարսկաստանից» [«Հորիզոն», 24.12.1914, թիվ 288, 1]:

Պարբերականը համոզված էր, որ ներկա հայ հասարակությունը [ռուսահայ – Ա. Կ.] արդեն այնքան ձեռնհաս էր հայ ժողովրդի պատմական ճակատագրի մասին հոգալու, որը տոգորված էր հայոց ազգային-քաղաքական գոյությունը ապահովելու տենչով, պետք է խնամքով վերաբերվեր ամեն մի թուրքահայի, յուրաքանչյուր հայ տարագրվածի, թուրքական յաթաղանից մի կերպ ճողոպրածի ճակատագրով [«Հորիզոն», 24.12.1914, թիվ 288, 1]:

Եզրակացություն*:* Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կրկին վտանգված էր արևմտահայության ճակատագիրը: Ռուսաստանի հարաճուն ճնշման ներքո թեև թուրքական իշխանությունները ստիպված էին ստորագրել բարեփոխումների վերաբերյալ համաձայնագիրը, սակայն բնավ մտադրված չէին այն իրագործելու: «Հորիզոն» պարբերականը մշտական ուշադրության առանցքում էր պահում բարեփոխումների իրագործման հիմնահարցը, քննության առնում այն տարբեր տեսանկյուններից՝ անելով իր դիտարկումներն ու առաջարկները:

Գրականության ցանկ

Ludšvejt S., Turciâ v gody pervoj mirovoj vojny 1914-1918gg., Voenno-političeskij očerk, izd.-vo Moskovskogo universiteta, 1966, ej 386.

Nassibian A., Writanin and the Armenien Question 1915-1925, London, 1984, New York, St. Markins Press: Croom Helm, ej 386.

Vrats'ean S., Hayastani hanrapetut'iwn, Peyrut' 1958t'., ej 684.

Simonyan H., RR., Andraniki zhamanaky, girk' A, «Kasia», hr., Ye.1996, ej 750.

Vrramean A., Haykakan harts'y, VO?v e marzpannerun nets'uky, «Horizon», 1914t'.,t'iv 126, ej 1.

Vrramean A., Haykakan harts'y. Hayut'ean dery, «Horizon», 1914t',t'iv 127, ej 1.

Vrramean A., Haykakan harts'y. Pashtoneut'ean mak'razatumy, «Horizon», 1914t',t'iv 128, ej.

Hayastani barekargumy yev marzpannery, hnaraworut'iwnner yev patehut'iwnner, t'iv 135, ej 1.

Arden sksum yen, «Horizon», 1914t',t'iv 137, ej 1.

Yntrut'iwnnery.– marzpannery, «Horizon», 1914t',t'iv 147, ej 1.

Hrahangner yndhanur k'nnich'neri irawasut'ean yev dzerrnahasut'ean masin, «Horizon», 1914t',t'iv 150, ej 1, 1914t'., t'iv 151, ej 1.

CH'elepyan A., Zoravar Andranik yev hay heghap'vokhakan sharzhumy, Ye., «Arevik» hr., 1990t'..

Safrastyan RR., Osmanyan kaysrut'yun. ts'eghaspanut'yan tsragri tsagumnabanut'yuny (1876–1920t't'.), Ye., 2009t'.

Awstro – serbakan yndharum, «Horizon», 1914t',t'iv 152.

Paterazm, «Horizon», 1914t',t'iv 153.

Jorazhoghovy, «Horizon», 1914t',t'iv 155.

Koch'. Hasel e p'vordzut'ean zhamy, «Horizon», 1914t',t'iv 175.

Hrdehy tsavalvum e, «Horizon», 1914t',t'iv 177, ej 1.

Tragizmy, «Horizon», 1914t',t'iv 178, ej 1.

Reflections on the Situation in Western Armenia in the Pages of "Horizon" on the Eve and at the Beginning of World War I

Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի արտացոլումը «Հորիզոնի» էջերում (Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի սկզբում)

Tiran, Drut'iwny Tachkastanum, «Horizon», 1914t',t'iv 181, ej 5.
Tachkahayk', «Horizon», 1914t',t'iv 167, ej 4.
Paterazmy ankhusap'eli ky darrnay, 1914t', t'iv 229, ej 1.
Germaniayi khaghy T'urk'iayum, 1914, t'iv 230, ej 1.
Ayzhm arden koroshwi, 1914, t'iv 231, ej 1.
Yovh. T'umanean, Verjin tagapy, 1914, t'iv 233, ej 1.
Paterazmi dashtits'. Rrus–t'urk'akan sahmany, 1914, t'iv 235, ej 1.
Ognenk', inch'ov karogh yenk', «Horizon», 1914t',t'iv 237, ej 1.
Verapahut'ean zhamanaky ch'e, «Horizon», 1914t',t'iv 240, ej 1.
Kovkasean banaki shtabits'. pashtonakan 1914, t'iv 243, ej 1.
Sep'akan herragirner, «Horizon», 1914t',t'iv 246, ej 1.
Nakhazgushats'um, «Horizon», 1914t',t'iv 247, ej 1.
Dro, Hay kamaworneri yerkrord gndi hramanatary viraworwats…, t'iv 255, ej 1.
Mer srbazan partk'y, «Horizon», 1914t',t'iv 288, ej 1.